ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 16/05
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ հերթական նիստի

ք. Երևան *19-ը օգոստոսի 2016թ.*

2016 թվականի օգոստոսի 19-ին կայացավ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության Խորհրդի հերթական նիստը:
Նիստին առակա կարգով մասնակցում էին խորհրդի բոլոր հինգ անդամները՝

1. Հայկակ Արշամյան
2. Սուրեն Սաղաթելյան
3. Վազգեն Կարապետյան
4. Միքայել Հովհաննիսյան
5. Նվարդ Մանասյան

Նիստը վարում էր ԹԻՀԿ փոխտնօրեն Սոնա Այվազյանը, քարտուղարությամբ՝ ԹԻՀԿ անդամ Հերիքնազ Տիգրանյանի:
Նիստին ներկա էին նաև ԹԻՀԿ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը, ԹԻՀԿ-ի և աշխատակազմի անդամներ:

Օրակարգում՝

1. ԹԻՀԿ-ի գործողությունները ճգնաժամային իրավիճակներում. ԹԻՀԿ – Կառավարության համագործակցության հեռանկարները.
2. Խորհրդի նախագահի ընտրություն.
3. Այլ հարցեր

Օրակարգի 1-ին հարց Զեկուցող՝	ԹԻՀԿ փոխտնօրեն Սոնա Այվազյանը ներկայացրեց վերջին շրջանում երկրում տեղի ունեցած իրադարձությունների ֆոնին ԹԻՀԿ գործելաոճը փոխելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, ապրիլյան պատերազմի, Սասնա Ծռերի գործողությունների ընթացքում ԹԻՀԿ-ն միշտ չէ որ իրավիճակային հրատապ գործողություններ է կարողացել ձեռնարկել, քանի որ չկա ճգնաժամային իրավիճակի պլան: Թեմայի շուրջ արտահայտվեցին Խորհրդի և ԹԻՀԿ աշխատակազմի անդամները: Կարծիք հայտնվեց, որ այս ամենից հետո իշխանությունների հետ համագործակցությունը պետք է կրի ավելի կոշտ և պահանջատեր բնույթ՝ ԹԻՀԿ-ն շարունակում է համագործակցել, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում, եթե իշխանությունները ապահովում են որոշակի իրական գործողություններ կոռուպցիայի դեմ պայքարում: Առաջարկվեց նաև հրապարակային ելույթներում պարբերաբար հիշեցնել կառավարության կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման մասին:
Խորհուրդը	***Որոշեց ճգնաժամային իրավիճակներին արձագանքել ավելի օպերատիվ գործողություններով՝ իշխանությունների հանդեպ դրսևորել առավել պահանջատեր վարքագիծ:*** *Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 5 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*

Օրակարգի 2-րդ հարց Զեկուցող՝	Սոնա Այվազյանը տեղեկացրեց, որ լրացել է խորհրդի նախագահ Հայկակ Արշամյանի պաշտոնավարման ժամկետը, հետևաբար պետք է կատարվի նոր նախագահի ընտրություն: Առաջարկեց ներկայացնել թեկնածուներ կամ ինքնառաջադրվել: Առաջարկվեց Հայկակ Արշամյանի թեկնածությունը, որը պաշտպանվեց բոլորի կողմից՝, այն հիմնավորմամբ, որ Հ.Արշամյանը արդյունավետ պաշտոնավարում է առաջին ժամկետը և կանոնադրությունը թույլ է տալիս ևս մեկ անգամ առաջադրվել:
Խորհուրդը	***Որոշեց խորհրդի նախագահ ընտրել Հայկակ Արշամյանին:*** *Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 4 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:*
Օրակարգի 3-րդ հարց Զեկուցող՝	ԹԻՀԿ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը տեղեկացեց, որ Գնումների ծրագրի փորձագետը հրաժարվել է հետագա աշխատանքից և այդ պատճառով սեպտեմբերի 1-ից ավելանալու է իր ծրագրային ծանրաբեռնվածությունը, ուստի ինքը հրաժարվում է Գործադիր տնօրենի պաշտոնից: Քննարկման արդյունքում Վ.Հոկտանյանին առաջարկվեց պաշտոնավարել մինչև սեպտեմբերի 1-ը, մինչև խորհրդի կողմից նոր գործադիր տնօրենի նշանակումը:
Խորհուրդը	***Ընդունեց ի գիտություն գործադիր տնօրենի հրաժարականը, որը կպաշտոնավարի մինչև խորհրդի կողմից նոր գործադիր տնօրենի նշանակումը:***

Խորհրդի նախագահ՝ _____ Հ. Արշամյան

Նիստի քարտուղար՝ _____ Հ. Տիգրանյան